

ԱԶԱՏ ԽՕՍՔ

ՏԵՏՐ 5

1902 ՍԵՊՏԵՄԲԵՐ

Ս.ԼԵՎՍՍԱՆԴՐԻՍ

ՄԵՐ ԱՆՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ

Երկիր մը ուր հաշուակալը երգիծարանութիւն՝ ախրացուն խմբագրութիւն կ'ընէ եւ թիւթիւնձին ինամակալ կ'ըլլայ, երկիր մը ուր փաշային չալը ծափերով կ'ողջունուի սարուկ ձեռքերու կողմէ եւ ապահովապրական ընկերութեան գործակալը յաւակնութիւն կ'ունենայ զրաքննելու լրագրի յօդուածները, երկիր մը վերջապէս ուր դրամի ու «փառք»ի համար կիները պոռնկութիւն եւ էրիկմարդիկ կաւատութիւն ընելու յօժար են, «Ազատ Խօսք»ը գուցէ քիչ մը անհաճոյ հնչէ ականջներու:

Դժբաղդարար հրապարակագրական կեանքիս մէջ երբեք հաճելի ըլլալու մտահոգութեամբը չեմ տոչորուած, ընդհակառակը ինծի նպատակ ընտրած եմ միշտ ... ԱՆՀԱՆՈՅ ըլլալ:

Անհաճոյ ըլլալ կրօնքի ու բարոյականի, այդ երկու մեծ կեղծիքներու, կեղծաւորներուն:

Անհաճոյ ըլլալ օճառի պղպջակներէ շինուած համբաւներու, գողութեամբ պարկեշտացած ազնուաշուքներու, բողոքութեամբ կուսացած պատիւներու, ունայնութեան վրայ կառուցուած արժանիքներու:

Անհաճոյ ըլլալ մանաւանդ իր խողի գարջ պարարտութեան մէջ յոխորտաբար յղփացող աղտոտ մենծ աղաներու որոնց համար նոյնիսկ շատ ազնիւ, շատ բարձր, շատ մաքուր զէնք մը կը համարիմ գրիչը եւ գորոնք պիտի ուզէի հալածել աղբանոցի քաբոտ ցախաւելով մը:

Ա՛հ, գերագոյն երանութիւնը անհաճոյ ըլլալու բոլոր անոնց՝ որոնք կ'արհամարհես:

Քու մտաւորականի բարձրութենէդ դիտել ոտքիդ տակ գալարուող ամբարտաւան ոչնչութիւններու վերահար ծամածուռմները, խնդալ ու անցնիլ . . . :

Ահա՛ «Ազատ Խօսք»ին ուղղութիւնը որ անշուշտ «Անուղղութիւն» մըն է հասկատակներու, պնակալէզներու, լուսցարարներու աչքին :

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ՓԱՇԱՆ ՊԻՏԻ ՉԻ ԳԱՅ

Փաշայապաշաները (Նգիպտոսի մէջ ատենօք կոմիւնանգամ կը պաշտէին հետեւաբար զարմանալի չէ որ փաշայ պաշտողներ գոնուին հիմակ) տաղնապի մէջ են:

Փաշան պիտի չի գա՛յ եղեր այս ձմեռ . . .

Ու ահա՛ յուսահատութեան վայնասուն մըն է որ կը լսուի ամէն կողմէ, ամէն անոնց կողմէ որոնք չեն կրնար ըմբռնել թէ ի՞նչպէս կարելի է որ առանց փաշայի ներկայութեան մօզն սւ բամպակը հասուննան Նգիպտոսի մէջ :

Փաշա՛ն, այդ անհրաժեշտ մարդը, այդ Ալեքսանդրեան նախախնամութիւնը, մեր հայրիկը, մեր ամենուս պապան, պիտի չի գա՛յ այս ձմեռ :

Լացէ՛ք ո՛վ հանրագրութիւնը ստորապրող գերի-

ներ, ո՛վ ոսկիի առջև խունկ ծխող արարածներ, պիտի չի գա՛յ Փաշան որ անպատճառ պէտք էր անբաժան ըլլար Ալեքսանդրիայի թաղական խորհուրդէն, ինչպէս որ սապատողը անբաժան է իր սապատէն :

Մենք կարեկցաբար խրատ կուտանք այն եղկելիներուն որոնք, նոր Երեմիաներու պէս, Փաշային չի գալը կ'ողբան, որ անմիջապէս նոր հանրագրութիւն մը ստորագրեն (մե՛ղք որ Յ. Ալփիարը հոս չէ) Փաշային ուղղուած եւ պողատագին խնդրեն իրմէ որպէսզի բարեհաճի փոխանորդաբար գոնէ իր Շա՛լը ղրկելու... իր շալը որ սպահովապէս թաղային գործերը պիտի կառավարէ նուազ անխելքութեամբ քան այն ոտքերը որոնց իբրև ծածկոյթ կը ծառայէ : Ոտքերը կ'ըսենք՝ որովհետև Նորին Վսեմութեան վարչական համբաւին արատ չբերելու համար կը սիրենք հաւատալ թէ Փաշան՝ ազգային խնդիրներու մէջ՝ իր ոտքերովը կը խորհի քան թէ զլիովը որուն վրայ «հանճարք կը փայլին», ինչպէս երգած է ազգային ցաւազար պուէտը Սիմօն Ֆէլէկեան :

ԱՆԴՐԱՇԽԱՐՀԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Հայուն մէկը որ ողջութեանը նիկողոս աղա կը կոչուէր եւ կատաղի ազգայինճի մըն էր եւ ազգայինճիութեան էն համաճարակային շրջաններուն, այսինքն Սահմանադրութեան խաւարեայի յուսարեայի պատմական օրերուն (ծերութեանն ալ Ալեքսանդրիայի մէջ մասնակցած էր այն խնդիրներուն որոնց «Փիւնիկի պայխարը» անունը կուտայ Ս. Բիւրատ, Տիգրան Երկաթի անմահ կենսագիրը) մեռնելէն վերջը, արժանահաւատ վկաներ կ'ըսեն թէ իր հոգին

վերջին կեցցէով մը իբր հրթիռ արձակած է ի պատիւ-
այն ատենուան թաղական խորհուրդին: Այս հայր ու-
րեմն, մեռնելէն ետքը՝ ինչպէս կ'ըլլայ ես ալ չեմ գի-
տեր, երկնային դաշտերուն մէջ թափառած ատենը,
Արքայութեան դուռը բաց գտնելով ներս կը մտնէ եւ
դուռը ետեւէն կը գոցէ: Եւ այս բանը ըրած ատեն կը
յիշէր այն փառաւոր օրերը ուր այսպէս առաջնորդա-
րաններէ ներս մտած եւ թաղականներ վար առած էր:
Աստուած եթէ գիտնար այս կռուազան հայուն մուտքը
իւր պաշտօնատան մէջ, անշուշտ աթոռին վրայ պիտի
դողբար, թաղական խորհրդի պարզ ատենապետի մը
պէս:

Պետրոս Առաքեալը կ'երեւայ թէ բնական պէտքի
մը համար պահ մը հեռացեր էր դրան քովէն եւ զայն
բաց ձգեր էր: Շատ ծեր ըլլալով ատեն ատեն ասանկ
ցնդածութիւններ ունէր (որքա՛ն առաջնորդարանի
դոնապաններ ունինք իրեն նման): Առաքեալը դրան
գոցուելուն ձայնը լսելով իր հազարամեայ ծունկե-
րուն եւ անագին բանալիներուն ներածին չափ վազե-
լով կուգայ եւ ի՛նչ տեսնայ իր դէմը . . . անծանօթ
մարդ մը, ընտրեալներու տետրակին մէջ ո՛ր եւ է թիւ,
տեղ չունեցող մէկը, օտարամուտ մը . . . : Շատ դող
կ'ելլայ: Ի՞նչ ազգէ էր արդեօք: Մօտենալով երբ տե-
սաւ խոշոր կախ քիթը, խորունկ ու ծածկամիտ աչ-
քերը, երբ մանաւանդ առաւ Տիրգի եւ ապուխտի գիր-
կընդխառն հոար զոր նախկին Նիկողոս աղան վարի
աշխարհէն բերած էր ի յիշատակ իր ազգութեան, ան-
միջապէս հասկցաւ որ հայ էր:

— Մա՛րդ, հոս ի՞նչ բան ունիս, դուն ո՞վ ես,
ի՞նչ կ'ուզես հոս, հարցուց հայերէն լեզուով:

— Կեցիր աղբար, քիչ մը նստիմ, յոգնութիւն

առնեմ Տէ անանկ . . . եւ գործը խօսքին միացնելով հայր Պետրոս Առաքեալին աթոռին վրայ տեղաւորուեցաւ, յետոյ շարունակեց .

— Գաղաքավարութիւն ըսուած բան մը կայ վարը, հոս ատկէ տեղեկութիւն չունի՞ք, մարդուն նըստեցէ՛ք մը կ'ըսեն, սուրճ մը կը հրամցնեն. . . ես գիտեմ քալած ճամբաս :

— Նպատակդ ի՞նչ է մարդ, դուն ո՞վ ես, ինչպէ՞ս հոս մտար, ո՞վ քեզի . . .

— Կեցի՛ր աղբար կարգաւ երթանք, իմ նպատակս գէշութիւն ընել չէ. ինձի վարը Նիկողոս աղայ կ'ըսէին, դուռը բաց գտայ ներս մտայ, գո՞հ ես :

— Հոս գիտե՞ս որ արքայութիւն է՞ :

— Հարկաւ, ես ալ անոր համար ներս մտայ :

— Գիտե՞ս որ դուն հոս գործ չունիս . քուկին Դժոխքցու ըլլալդ հարկաւ ինէ աղէկ գիտես . . . քեզի ո՞վ ազատ ձգեք է, երկնքին մէջ պտտիս . . . անպատճառ Դարբիէլ հրեշտակապետին մէկ սխալը ըլլալու է :

— Ես Դարբիէլ Մարբիէլ չիյտեմ, իմ գիտցածս սա է որ Արքայութիւն մտայ եւ դուրս ելլալու ալ միտք չունիմ .

Աս ըսելով Նիկողոս աղան սկսաւ կօշիկները հանել եւ շուրջը նայեցաւ հողաթափներ փնտռելու ձեռով մը . . . իր տունն էր կարծես :

Պետրոս Առաքեալ մեծ դողերու մատնուած էր : Երեւակայեցէ՛ք մէյ մը, Արքայութեան մէջ բռնութիւն, բիրտ ուժ կարելի չէ գործածել . քաղցրութեան, սրբութեան, երանութեան հայրենիքն է ան : Այս մարդը կարելի չէր բռնի դուրս հանել սալ . իր կամքովը երթար նէ երթար : Աս ի՛նչ փորձանք էր : Անիծեց իր մտայրութիւնը, ափսոսաց, աւաղեց . . . «Ստուած կ'ըսէ նէ իրաւունք ունի, իրաւցնէ ցնդեր եմ » :

Առաքեալը նախ փորձեց վախցնել. — Երեսս աղէկ նայէ, ըսաւ հայը, ինծի Նիկողոս աղա կ'ըսեն, ես 20 հատ թաղական խորհուրդ վար ատած, 30 հատ տեղը դրած մարդ եմ: Առաջնորդներն անգամ կը գողային ինէ:

Առաքեալը ջանաց գործը անուշի տանիլ. — Մ'ըներ, մեղքի մի մտնար պարսպ տեղը . . . ինծի ալ մեղք է: Աստուած պապան իմանայ նէ սատարիկ կը բարկանայ, ինծի հացէս, գործէս պիտի ընես . . . սա ձեռմակ մօրուքս գոնէ յարգէ, հայտէ՛ տղաս, տա տեղէն անուշութեամբ դուրս ելիք. ես սատանաներուն լուր կը գրկեմ որ քեզի ուրիշ աչքով նային, միւսներուն պէս չի չարչարեն:

Կահրահ մըն է ձգեց Նիկողոս աղան: Պետրոս Առաքեալը քրտինք թափել սկսաւ. — հողիդ սիրես, քիչ մը կամաց, հոս սրճարան չէ, Արքայութիւն կ'ըսեն ստեղծին. խմացողը ի՞նչ կ'ըսէ, Տէ՛ր ողորմեա. . .

Չերկնցնեմ, Պետրոս Առաքեալ ամէն միջոց ի գործ դրաւ, սպանալիք, համոզողութիւն, աղաչանք, Նիկողոս աղան Արքայութեանէն ձամբելու համար, բայց ի զո՛ւր.

— Ես քու գիտցածներէդ չեմ, ի՞նչ երեսս աղէկ նայէ՛, կը պատասխանէր հայը անփոփոխ:

Ճարահատեալ, Պետրոս Առաքեալ մօրուքը ձեռքին մէջ առաւ եւ սկսաւ հնարք մը վնասել: Գտա՛ւ: Կնաց հրեշտակներուն մէկ գնդապետը գտաւ եւ ըսաւ որ քանի մը հարիւր հրեշտակ գլուխը ժողվելով Արքայութեանէն դուրս տեղ մը երթան եւ մեծ աղմուկ մը հանեն, պոռալ կանչելու ձայներ, որոնց ատեն ատեն տանկ «կիցցէ՛» ի «անկցի» ի պէս հայերէն բառեր խառնեն: Ինքն ալ վերադարձաւ Նիկողոս աղային քով որ

սկսաւ իր աղգային կեանքէն. զրուագներ պատմել,
թէ ինչպէ՞ս Աղեքսանդրիա զոնուած միջոցին, եւն.

Յանկարծ ահագին վայնասուուն մըն է նայիս բըր-
դաւ դրսէն. հայը զարմացած խօսքը ձգեց եւ մտիկ
ըրաւ, ընտանի, սիրելի հնչիւններ կուգային ական-
ջին, անկցի կեցցէի հայերէն ելեւէջ մը կար կարծես
այդ խառնաձայնութեան մէջ: Կարելի՞ ըսն էր, Տէ՛ր
Աստուած:

— Աս ի՞նչ աղմուկ է, հարցուց:

— Ի՞նչ պիտի ըլլայ, պատասխանեց Առաքեալը,
դէմքը զզուանօք ծամածռելով, էտէպսիզ հայերն են
նորէն, քու ազգակիցներդ:

— Վա՛յ, ըսաւ Նիկողոս աղան աչքերն ու ա-
կանջները Փիւնիկին թերթերէն աւելի խոշոր բանա-
լով. հայերն են հա՞, կեցցէ՛ պի, աֆէրիմ, հոս ալ ը-
րածնին կ'ընեն կոր, է՛ ինչի՞ համար է աս աղմուկը,
ի՞նչ կ'ուզեն կոր:

— Ի՞նչ պիտի ըլլայ, նորէն թաղահանի կռիւ
ըլլալու է, խայտառակները ամիս չանցնիր որ թաղա-
կան խորհուրդ մը վար չառնեն ուրիշ մը սեղը չի
գնեն, վերջը չեկաւ որ . . . :

— Ի՞նչ կ'ըսես պի, բացազանչեց Նիկողոս ա-
ղան, ուրախութենէն ֆէսը վեր նետելով . . . ոտքդ
պագնեմ, աս բաները ո՞ւր կ'ըլլան կոր:

— Հոս ըլլալու չեն աս', ո՞ւր պիտի ըլլան, Դը-
ժոխքին մէջ:

— Է՛յ հոս չըլլա՞ր . . .

— Մեղա՛յ, Սրբայութեան մէջ կռիւ կ'ըլլա՞յ:

— Ի՞նչ ըսել է, հոս հայ չիկա՞յ:

— Կայ քանի մը հայ, բայց հոս թաղահանի մա-
ղականի պէտք չունինք, մեղա՛յ, մեղա՛յ, Սրբայու-

թեան մէջ թաղականի կոն'ւ, առ ինչ մեծ մեղք մը գործեցիր գիտե՞ս . . .

— Հոս առանկ բան չի կայ հա՞ . . .

Նիկողոս աղա ոսք ելաւ յեղսփոխուած:

— Անանկ է նե՛ ըսց սա դուռը, աղբար, քեզի ըլլայ Արքայութիւնդ, բարով վայլես . . . աչք չունիմ, թաղական հոգարարձուի կոնւ չըլլալէն ետքը Արքայութիւնդ քանի՞ փարայի կ'առնեմ, առաջուրնէ չըսէի՞ր, մարդ Աստուծոյ . . . եօ՛, պեկն պուշուսս եափաւնամ . . . բա՛ց սա դուռը Աստուածդ սիրես, բա՛ց սե սա Դժոխքին ճամբան ցուցո՛ւր ինձի:

Պետրոս Ասաքեալ դուռը բանալը եւ Նիկողոս աղան դուրս ելլալուն պէս երեսին գոցելը մէկ ըրաւ. եւ արտփանքի երկար հառաչ մը արձակելով՝

— Աս խելքը չմտմտայի նե, բանս բուրդ էր:

ԶԷՄԷՆԼԻ ԲԱՍՏՐՄԱ ԵՒ ԴՊՐՈՅԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Եթէ Փաշան գնաց, շալն ալ հետը տանելով, գոնէ իր սակաւօրեայ վերջին խնամակալութեան մեջոգին մեզի պարգեւեց Գրիգոր Մելքոնեանը զոր ընտրողները դուրս փոխած էին ազգային շրջանակէն, մարտի քուէարկութեան առեւ: Այդ թիւթիւնձի պօշ հեռիֆը, ամէն պօշ հեռիֆներու պէս, ինքզինքը բանի մը տեղ դրած, իր խնամակալի պաշտօնը լըջօրէն ի գործ անել փորձած է եւ «ի լրումն ամենայնի» նոյնիսկ դպրոցի բարեկարգութեան խնդրին մէջն ալ մըտնել ուզած է: Բարերախտաբար վսեմ. Աբրահամ պէյ Բարթող, որ կ'երեւայ թէ անհամ կատակներէ չախտութիւր, հասկցուցեր է այդ անտանելի մարդուկին որ

առաջնորդարանէն դուրս ելածին պէս, դէպի ձախ դառնալուն փողոցին դուռը կրնայ գտնալ :

Բայց Գրիգոր Մելքոնեան՝ յամառ այն աւանակին պէս զոր Կեսարացի մը կարծեմ վեց անգամ ներկած է ժամանակին, չէ ուզած խօսք հասկնալ եւ «բրթէսթօ էտէրիմ, էֆէնաիմ» ըսած է (Գրիգոր Մելքոնեան հայերէնը տաճկերէն լեզուով կը խօսի) ու պնդած է որ մինչեւ փաշային կամ շալին վերադարձը դպրոցը մնայ այն ողորմելի վիճակին մէջ ուր էր փաշային մեկնած միջոցին, այսինքն ըլլայ միշտ Լեւոն Մկրտիչեան գերդաստանի ազգականաց, խնամեաց եւ մերձաւորաց համար ապաստանարան մը, անկելանոց մը:

Մենք խրատ կուտանք Գրիգոր Մելքոնեան կոչուած հերիքին որ փոխանակ դպրոցական խնդիրներու մէջ քիթը խօթելու, որոնցմէ բան մը չի հասկնար, թո՛ղ իր թիւթիւնը ծախսելու նայի եւ ջանայ որ՝ նաքիւրեղը իբրեւ սերք եւ սերթը իբրեւ նաքիւրեղ չի տայ յաճախորդներուն: Չէմէնլի բաստրմա եւ դպրոց այնքան հեռու են իրարմէ որքան հայերէնը տաճկերէնէն:

Կը յուսանք որ կրկին առիթ պիտի չունենանք այդ մարդուկին ականջէն քաշելու:

Ք Ո Լ Ե Ր Ա Ն

Ժանտախտը, «Արշալոյս»ը, «Արտեմիս»ը ունէինք արդէն, Քոլիբան ալ եկաւ, Լեւոն Մկրտիչեանն ալ գալու վրայ է: Իրաց այս տխուր վիճակին առջեւ ուրիշ բան չմնար մեզի այլ մեռնելու լաւագոյն կերպը որոշել, որովհետեւ Մոլիէրի գիւցազներն ըսածին նման

ինչպէս արցակ կայ արցակ ալ կայ, նոյնպէս մեռնիլ կայ մեռնիլ ալ կայ եւ, ըստ իս, քոլերայէն մեռնիլը ամենէն յոռեոյն կերպը կը նկատեմ ապահովաբար: Արժանապատուութիւն ունեցող մէկը պէտք չէ որ քոլերայէն մեռնի, ահա՛ իմ համոզումս: Լաւագոյն է որ մարդ Հայորդիին քերթուածները կարգաւով շնչասպառ ըլլայ:

Դիտած էք որ քոլերայէն բռնուողը նոյնիսկ մարդ ըլլալէ կը դադրի եւ *cas* մը, պարագայ մը կ'ըլլայ եւ ինչ պարագայ . . . գոնէ անկեղծ, անկասկած, չէնք շնորհք պարագայ մը, ո՛չ աւա՛ղ, այլ կառկածելի պարագայ մը: Կասկածելի պարագայի վկայականով մեկնիլ աշխարհէ եւ երթալ Արքայութեան դուռը զարնե՛լ, ձշմարիտը երես ունենալու է:

Կը խղճանք «Արշալոյս»ի Եղիշէին վրայ (Թորոսեան . . .) որ առանց նկատողութեան առնելու այս բոլորը, կարծեր է համակրութեան միջնորոտ մը շինել իր շուրջը քոլերայէն բռնուելով: Բարեբախտաբար վերջին վայրկեանին զգացեր է իր սխալը եւ կա՞քը քոլերայէ մեռնելու աստիճան ծայրահեղութեան չէ տարած:

Կը շնորհաւորենք զինքը:

ՀԱՅ ՀԱՆԴԵՍ

«Նոր Կեանք»ը Տօնփիշոթեանալէն ու «Անա՛խտ»ը Սուրէն Պարթեւեանի խարազանին տակ քալել սկսելէն ի վեր արտատահմանի մէջ շնորհքով հայ հանգեսի մը պէտքը կը զգացուէր: Հայ լրագրութեան ամենէն տաղանդաւոր, ամենէն սիրելի ու ամենէն ծանօթ ներկայացուցիչը Տ. Ս. Արփիարեան գոնացում տուած է շտաբու բաղձանքին, վեհտակի մէջ հիմնու-

լով «Հայ-Հանդէս»ը, ազգային ու գրական, որուն առաջին երեք թիւերը հրատարակ ելած են արդէն:

Այս երեք թիւերը ցոյց կուտան թէ մեծանուն հրատարակագիրը միշտ նոյն ուղղագրատ եւ անխաբւրայ խորհրդականն է ազգային ի՛ գիրներու մասին, նոյն իմաստասէր ու փափկազգած գրագետը եւ նոյն ձաղկիչ ու անխնայ բանակուողը:

«Հայ Հանդէս»ը կը հրատարակուի ամէն ամսուն 1ին եւ 15ին, բաժնեկիներն է տարեկան 10 ֆրանք, վեցամսեայ 5 ֆրանք, հասցէն՝ Hai Hantesse, Cassetta Postale 341, Venise (Italie)

Եգիպտոսի մէջ բաժանորդ գրուիլ փափաքողները կրնան դիմել Տ. Մեսրոպ Նորատունկեանի որ ստանձնած է թերթին գործակալութիւնը:

ԵՐԿՈՒ ԽԱՆԵՐԸ

Երկու խան ունինք այժմ Ալեքսանդրիա: Մին անշարժ միւսը շարժուն: Առաջին՝ Րէիզեան պէյին շինած խանը, որ է Եկեղեցիին նորաշէն կալուածը, երկրորդ՝ Մուզաֆէր-էւ-Տին Շահին շինած խանը՝ որ է՝ Տ. Միհրան Գալֆայեանը: Առ այժմ ձգենք Շահին խանը եւ զբաղինք վնասին խանովը:

Այդ խաղք ու խայտառակ կալուածքը որ դեկտեմբերին պիտի աւարտի եւ զոր կը յուսանք թէ կառավարութիւնը պիտի բարեհաճի վարձել կեդրոնական բանտի վերածելու համար, հազարաւոր սակիներու նստաւ ազդին գլխուն: Առիթ ունեցաք դերեկ ժամանակ մամ վտռելով այցելելու այն նկուղները որ սենեակի սեղ պիտի ծառային այն եղկելիներուն որոնք իրբեւ վարձակալ պիտի մտնան այդ թանձրացեալ

խաւարին մէջ : Լոյսի ու արեւի այս երկիրը միջոցը
զտնալ մուծ սենեակներու մէջ նստեցնելու բնակիչ-
ները, աս ալ արժանիք մըն է փաշային ոտքերը ծած-
կող շալերուն համար :

— Ահօզ դազտալըը իջին էյու տըր, էֆէնտիմ,
ըսեր է բաստըրմայի հայրենակիցը երբ դիտողութիւն
ըրեր են սենեակներու մթութեան մասին :

Իսկ երբ անոնց պզտիկութեան համար խօսք են
բացեր, մեր թիւթիւնճի պօշ հերիֆը պատասխաներ է :

— Աարը դօճա այրը եաթսընլար էֆէնտիմ, ա-
լաֆրանկատա էօյլէ իմիջ :

Կը փափաքէինք որ Վսեմ Աբրահամ պէյ Բարթող
անգամ մը այցելէր այս շէնքը, բայց կը զգանք որ
անկարելի է : Նրբանցքները դիտմամբ այնքան նեղ
չինած են որ մէջէն չկրնայ անցնիլ :

ԶԷՄԷՆԼԻ ԲԱՍՏՈՄԱ ԵՒ ՍՐԱՄՏՈՒԹԻՒՆ

Մեր թիւթիւնճի խնամակալը կ'երեւայ որ զուրկ
չէ սրամտութենէ :

Իր բարեկամներէն մէկին ըսած է վերջերս .

— Պիլի՞րսին նէ ֆարիս վար բուլիցանըն վէ պու-
լիցանըն պէյնիտէ . . .

Եւ մինչ բարեկամը հարցմանը պատասխան չզըտ-
նելով ապուշ ապուշ երեսը կը նայի, թիւթիւնճին կը
պատասխանէ նուրբ (ո՛հ քանի) ծիծաղով մը .

— Բուլիցայը պաշկասընըն իւսթիւնէ չէքէրիմ,
պուլիցայը պէնիմ իւսթիւմէ . . .

Սրամտութիւն մը որ սակայն քիչ մը չէմէնլի
բաստրմա կը հոտի :

ԳԵՂԵՑԻԿ ԽՈՐՀՈՒՐԴ ՄԸ

Կը լսենք որ Գահիրեցի խումբ մը երիտասարդներ, որոնց մէջ չեն պակսիր գրչի ու տաղանդի տէր անձինք, մտադիր են թերթ մը հիմնել քաղաքական, գրական ու ազգային:

Այս խորհուրդին մեր բոլոր ուժովը կը ծափահարենք: «Փարոս»ի դադարումէն ի վեր կրնանք ըսել որ հայերէն թերթ չունինք Սգիպտոսի մէջ: «Փիւնիկ»ը իր est-ouestի թղթակցութիւններով անհամութեան մրցանակը շահելու վրայ է, «Արշալոյս»ը ընդունարան մը եղած է ամէն կողմէ թափուող աղտոտութեանց, իսկ «Արտեմիս» քսաներորդ դարու հայ կանանց ջլդիկութեան օսկանը, անգամ մըն ալ կուզայ հաստատել թէ հայ կինը լուացարարութենէ ու խոհարարութենէ ուրիշ գործի անընդունակ է, գոնէ մինչև ցնոր տնօրինութիւն:

Իցի՛ւ թէ ժամ առաջ իրագործուէր Գահիրեցի երիտասարդներու խորհուրդը եւ Սգիպտոսն ալ ունենար իր լուրջ ու գրական օսկանը:

Ալեքսանդրիայի վերջին թաղական պայքարի միջոցին տեսանք թէ մամուլը ինչ մեծ դեր կարող է կատարել հանրային խնդիրներու մէջ եւ որքա՛ն հզօր է իր ազդեցութիւնը:

Պարտաճանաչ կամ մանաւանդ պատուաւոր թերթ մը, ինչպէս որ կը յուսանք թէ պիտի ըլլայ նոր հիմնուելիքը, որ աղտոտ համաձայնութիւններէ ու կեղծաւոր հպումներէ զերծ կը մնայ ու միշտ կը պահէ իր անկախութիւնը, կրնայ շատ օգտակար գործեր տեսնել Գահիրէի մէջ:

Գահիրէ երկար ատենէ ի վեր կը տառապի Ա-

րարկերցիական ախտէ եւ պէտք ունի թերթի մը որ գլուխ կայնելով հանրութեան, իր շուրջը բոլորէ ամբողջ ցիր ու ցան ուժերը եւ եկեղեցին, դպրոցն ու կալուածները ազատէ կարգ մը անխիղճ վաշխատու Արարկերցիներուն ձեռքէն որոնք տգրուկներու պէս փակած են ազգային առաջնորդարանին, անյիշատակ ժամանակներէ ի վեր:

Գահիրէի մէջ ալ պէտք է սխիւ սահմանադրութեան գործադրութեան պայքարը, հո՛ն ալ պէտք է ժողովուրդը արթնցնել եւ ցոյց առլ թէ փաշաները անպատճառ անհրաժեշտ չեն ազգին գլխուն, թէ որ եւ է կամայապաշտ ու ինքնա՛աւան փաշայի տեղ բանիբուն մարդիկ կարելի է զտնել որոնք առաջնորդարանի գործերը վարեն շատ աւելի օգտակար կերպով:

Գահիրէ եւ Ալեքսանդրիա այն երկու հայ դադթականութիւններն են որոնք ամենէ աւելի բարգաւաճ վիճակ մը ունին եւ որոնց ազգային հատոյթները անբողբատելի կերպով փայլուն են: Ամօ՛թ է որ հակառակ ասոր դեռ այդ երկու կեդրոններուն մէջն ալ գոնէ շնորհքով դպրոց մը չունենանք: Եւ ըստ մեզ ասոր միակ պատասխանատուներն են Վսեմ Պօղոս փաշա եւ Վսեմ Տիգրան փաշա որոնք տարիներէ ի վեր իբրև ազգապետ կը վարեն երկու թաղական խորհուրդները:

Կա՛մ այն է որ այդ մարդիկը ս' կարող են ազէկ բան մը ընելու կա՛մ այն է որ կամք չունին, երկու պարագային ալ օգտակար գործ մը պիտի ընեն բոլորովին քաշուելով ազգային գործերէ:

Նոր թերթի մը հրատարակման աւետիսը տալով մեր ընթերցողներուն, այս քանի մը խորհրդածութիւնները կ'ընենք ուղղելով զանոնք մասնաւորապէս մեր ապագայ պաշտօնակիցներուն:

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՎԱՇԽԱՌՈՒՆԵՐԸ

Տ. Գրիգոր եւ Կարապետ Մելքոնեան, Կեսարացի ծխախոտի վաճառականները, իրենց պաշտօնեաներուն վրայ պարտք դրած եւ ամսական բան մը վճարելու սնտուկի մը որուն մէջ գոյացած տարեկան հասոյթը կը ղրկեն պտորիարքարան ի նպաստ Կեսարիայի մէջ գտնուած որբանոցի մը:

Այդ նպատը գիտէ՞ք ի՞նչ պնուճով կը հրատարակուի ազգային թերթերու մէջ. — իբրեւ նուէր Տ. Գրիգոր եւ Կարապետ Մելքոնեան եղբարց: Ուրիշներուն դրամը իբրեւ իրը նուէր տալ, պարզապէս գողութիւն մըն է եւ գողութիւններուն ամենէն վատը, ամենէն պարզելին:


Մարդ ո՞ր աստիճան ստորունութեան, ո՞ր աստիճան բարոյական խաթարման մէջ իյնալու է որ իր պաշտօնեաներուն դրամը բռնի առնէ ձեռքերնուն ու իր անունով նուէր ընէ բարեգործական հաստատութեան մը:

Ահա՛ բարեգործութիւն մը որ պարզապէս չէ-մէնլի բաստրմա կը հոտի եւ որուն հոտին միայն Լեւոն Մկրտիչեան մը կրնայ գիմանալ:

Այդ տեսակ բարերարներուն երախտապիտական պարտք վճարելու լաւագոյն կերպն է երեսին թփնել ու անցնիլ:

Ու ասիկա պիտի ըլլայ «Ազատ Խօսք»ի անպիտ. փոխ ուղղութիւնը:

Ասով կը յուսանք այդ տեսակ բարեգործութեան վաշխառուները գիմակաղերծ ընել:



ԱԶՍ ԽՕՄՔ

«Ազատ Խօսք»ը որ անցած տարի Յունիսին սկսուած էր հրատարակուել Բարիզի մէջ եւ 4 տետր լոյս տեսած, այժմ պիտի շարունակուի Ալեքսանդրիա:

«Ազատ Խօսք»ը հանդէս մը չէ այլ տետրակներ որոնք պարբերաբար լոյս պիտի տեսնեն, հետեւաբար բաժանորդագրութիւն չենք բացած ու հատով միայն պիտի վաճառենք:

Եգիպտոսի համար հատը

ՄԷԿ ՂՐՈՒՇ ՈՂՉ

Արաստահմանի համար հատը

ԿԷՍ ՖՐԱՆՔ

Ճամբու ծախքը մեր վրայ, մեր հասցէն է՝

YERVANT ODIAN

Poste Restante

(Egypte)

Alexandrie

«Ազատ Խօսք»ը կը խմբագրուի միմիայն Երուսաղէմի Օտեանի կողմէ: Որ եւ է թշնամական յօդուած միայն իրեն պէտք է ուղղել:

ՏՊԱԳՐ. ՀԱՅԿ. ՏՊԱՐԱՆ «ԱՐԱՔՍ»
